

**Համախմբված ֆինանսական
հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**Հայաստանի հանրային
Հեռուստաընկերություն ՓԲԸ**

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Ռոբինսոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

Հայաստանի Հանրապետության հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական
Հիմնարկին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի հանրային հեռուստաընկերություն Փակ Բաժնետիրական
Ընկերության և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական
հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի
մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ
վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական
կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների
հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական
հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական
քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2024թ.
դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված
տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և
իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների
(ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան:
Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր
եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական
հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների
էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի
էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք
կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի
Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված
պահանջների և ՀԷՄՍԻ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար
համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:



Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատության վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի խումբը լուծարելու կամ խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմի օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր



Եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել հսմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA

Առաջադրանքի պատասխանատու

28 մարտի 2025թ.



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Հիմնական գործունեությունից հասույթ	5	5,330,785	5,280,683
Գովազդից հասույթ և հովանավորչությունից հասույթ	6	757,909	780,203
Դրամաշնորհներից եկամուտ	7	400,570	504,098
Այլ եկամուտներ	8	453,264	491,820
Ֆիլմերի և հաղորդումների գծով ծախսեր	9	(2,063,274)	(1,739,646)
Հեռարձակման ծախսեր	10	(398,744)	(231,991)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(2,955,376)	(2,861,400)
Մաշվածություն և ամորտիզացիա		(1,078,750)	(1,074,304)
Այլ ծախսեր	11	(679,568)	(584,949)
Գործառնական գործունեությունից (վնաս)		(233,184)	564,514
Ֆինանսական եկամուտ (ծախս), զուտ		6,966	(267)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		4,668	4,229
Շահույթ (վնաս) մինչև հարկերը		(221,550)	568,476
Շահութահարկի գծով ծախս(փոխհատուցում)	12	(838)	(83,702)
Տարվա օգուտ(վնաս)		(222,388)	484,774
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(222,388)	484,774

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	10,914,657	11,062,337
Ոչ նյութական ակտիվներ	14	507,147	570,653
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		11,421,804	11,632,990
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		61,607	54,620
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	567,414	495,755
Այլ ընթացիկ ակտիվներ		21,669	6,305
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		259,366	394,092
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		910,056	950,772
Ընդամենը ակտիվներ		12,331,860	12,583,762

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	17		
Կանոնադրական կապիտալ		2,391,107	2,391,107
Էմիսիոն եկամուտ		755	755
Վերագնահատման պահուստ		5,603,775	5,603,775
Պահուստային կապիտալ		362,319	356,319
Կուտակված շահույթ		434,763	934,009
Ընդամենը սեփական կապիտալ		8,792,719	9,285,965
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ			
Վարկեր	15.2	87,500	150,000
Հետաձգված եկամուտ	18	1,469,226	1,341,540
Հետաձգված հարկային պարտավորություններ	19	1,055,009	1,088,368
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		2,611,735	2,579,908
Ընթացիկ			
Վարկեր	15.2	62,856	316
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20	862,790	683,034
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		1,760	34,539
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		927,406	717,889
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		12,331,860	12,583,762

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. մարտի 28-ին

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Աննա Սիրադեղյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Կանոնա- դրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնա- հատման պահուստ	Պահուս- տային կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	2,391,107	755	5,603,775	283,599	783,151	9,062,387
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	484,774	484,774
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	484,774	484,774
Շահաբաժիններ	-	-	-	-	(261,196)	(261,196)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	(261,196)	(261,196)
Պահուստային կապիտալի աճ	-	-	-	72,720	(72,720)	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,391,107	755	5,603,775	356,319	934,009	9,285,965
Տարվա վնաս	-	-	-	-	(222,388)	(222,388)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	(222,388)	(222,388)
Շահաբաժիններ	-	-	-	-	(270,858)	(270,858)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	(270,858)	(270,858)
Պահուստային կապիտալի աճ	-	-	-	6,000	(6,000)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,391,107	755	5,603,775	362,319	434,763	8,792,719

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին [համախմբված] համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 36-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ(վնաս)	(222,388)	495,303
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,456,364	1,353,403
Հիմնական միջոցների արժեզրկում	6,275	-
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	838	73,173
Ֆինանսական եկամուտ	(23,510)	(21,224)
Ֆինանսական ծախս	16,545	21,491
Շնորհներից եկամուտ	(400,570)	(504,098)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(4,668)	(4,229)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	828,886	1,413,819
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(73,075)	271,522
Պաշարների փոփոխություն	(15,634)	3,746
Այլ ակտիվների փոփոխություն	(14,812)	(2,542)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	184,381	(1,080,163)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	909,746	606,382
Շնորհներից ստացված դրամական միջոցներ	528,256	48,366
Վճարված տոկոսներ	(16,545)	(21,175)
Վճարված շահութահարկ	(66,976)	(213,831)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	1,354,481	419,742
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,244,566)	(1,190,053)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	1,760	765
Ստացված տոկոսային եկամուտ	23,510	21,224
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,219,296)	(1,168,064)

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից և վարձակալական պարտավորությունների գծով մուտքեր(ելքեր)	40	(200,000)
Վճարված շահաբաժիններ	(270,858)	(261,196)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(270,818)	(461,196)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	907	742
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	394,092	1,602,868
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	259,366	394,092

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 36ՊՊ-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված
հազար հայկական (<<) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Հայաստանի հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ-ի («Մայր Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների՝ «Նորք Գովազդային Գործակալություն» ՍՊԸ-ի և Առաջին Ալիք Ամերիկա Սի-Քորփորեյշն-ի (բոլորը միասին հետայսու՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

Հայաստանի հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության («ՀՀ») կառավարության 2001թ. հուլիսի 4-ի թիվ 592 որոշմամբ:

Մայր Ընկերության ստեղծման նպատակը հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման գործունեության իրականացումն է՝ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

Մայր Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գարեգին Հովսեփյան փողոց 26:

«Նորք Գովազդային Գործակալություն» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2020թ. -ի օգոստոսի 18-ին, որի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գարեգին Հովսեփյան փողոց 26:

Առաջին Ալիք Ամերիկա Սի-Քորփորեյշնը հիմնադրվել է 2024թ. -ի մարտի 27-ին, որի իրավաբանական հասցեն է՝ ԱՄՆ, Կալիֆորնիա, Հյուսիսային Հոլիվուդ, 91605, Բաքքոք ավենյու 824:

2024թ.-ին խմբի հիմնական աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 589 մարդ (2023թ.՝ 557 մարդ):

Մայր Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, բաժնետոմսերի կառավարման լիազորությունը տրված է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկին:

Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

31 դեկտեմբերի 2024թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործու- նեության ոլորտ	Ձեռք- բերման ամսաթիվ
“Նորք գովազդային գործակալություն” ՍՊԸ	100	Հայաստան	2020թ. օգոստոսի 18	Գովազդ	2020թ. օգոստոսի 18
Առաջին Ալիք Ամերիկա Սի-Քորփորեյշն	100	ԱՄՆ	2024թ. մարտի 27	Լրատվություն	2024թ. մարտի 27

31 դեկտեմբերի 2023թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործու- նեության ոլորտ	Ձեռք- բերման ամսաթիվ
“Նորք գովազդային գործակալություն” ՍՊԸ	100	Հայաստան	2020թ. օգոստոսի 18	Գովազդ	2020թ. օգոստոսի 18

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Խուճուղի ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեյջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժույթային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգիայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Խմբի ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Պարզավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (<<ՄՍ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարզավորությունը վաճառք և հեղադարձ վարձակալությամբ գործարքներում» (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),

- «Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ» (<<ՄՍ 1 փոփոխություններ)

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել հմբի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԻ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել հմբի կողմից:

Դեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն հմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Դեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա հմբի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (<<ՄՍ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (<<ՄՍ 9 և <<ՄՍ 7 փոփոխություններ)
- <<ՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

4.1 Պատրաստման հիմքերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ հողամասերի և շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

4.2 Համախմբման հիմքեր

հմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ հմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ հմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ հմբի տեսանկյունից:

4.3 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումները չափվում են բաժնեմասնակցության մեթոդով:

Ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումների հաշվեկշռային արժեքն աճեցվում կամ նվազեցվում է ասոցիացված կազմակերպության և համատեղ ձեռնարկի շահույթում կամ վնասում և այլ համապարփակ արդյունքում հմբի շահաբաժինը ճանաչելու համար՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով գումարները, որպեսզի ապահովվի հմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանությունը:

հմբի և իր ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկումների միջև գործարքների արդյունքում առաջացած չվաստակած օգուտները և չկրած վնասը բացառվում են հմբի՝ այդ կազմակերպություններում բաժնեմասնակցության չափով: Երբ ակտիվի չկրած վնասը բացառվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման:

հմբի ասոցիացված կազմակերպության ներդրման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

4.4 Արտաթույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (<< դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: << դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտաթույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտաթույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
<< դրամ/1 Եվրո	413.89	447.90

Արտաթույթով գործարքներից, ինչպես նաև արտաթույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

4.5 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ ՊՀ-ի հետ կնքված պայմանագրի իրականացումից, գովազդային և հովանավորչական գործունեությունից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հովանավորչությունից հասույթ

Հովանավորչական եկամուտները գոյանում են հովանավորների մասին հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ տեղեկությունների տեղադրումից: Այն ճանաչվում է կնքված պայմանագրերի դրույթներից ելնելով՝ ծառայության փաստացի մատուցման պահին:

Գովազդից հասույթ

Առաջանում է գովազդի տեղադրումից և ճանաչվում է գործարքի փաստացի իրականացման ժամանակ << օրենսդրությամբ սահմանված կարգով: Հասույթը ճանաչվում է կնքված պայմանագրերի համաձայն, ծառայության փաստացի մատուցման ժամանակ:

4.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել հմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները ճանաչվում են այն դեպքում, երբ՝

- հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- ակտիվը վերահսկվում է հմբի կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և
- ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստը: Հետագա ծախսումները կապիտալացվում են ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքի վրա, եթե ակնկալվում է, որ դրանց վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Խումբ:

Խմբի որոշ ոչ նյութական ակտիվների ճանաչման առանձնահատկությունները ներկայացված են ստորև.

Լիցենզիաներ

Խմբի կողմից հաղորդումներ, ֆիլմեր և այլ ծրագրեր հեռարձակելու իրավունք տրամադրող լիցենզիոն պայմանագրերի կնքման արդյունքում առաջանում են ոչ նյութական ակտիվներ. Դրանք ճանաչվում են լիցենզիայի ուժի մեջ մտնելու պահից:

Ֆիլմեր, հաղորդումներ

Խմբի կողմից գնված ֆիլմերը և հաղորդումները ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, եթե բավարարում են ոչ նյութական ակտիվի ճանաչման պահանջները:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, մասնավորապես ակտիվի նկատմամբ վերահսկողության ժամանակաշրջանը և ակտիվի օգտագործման նկատմամբ իրավական և նմանատիպ սահմանափակումները: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում հետևյալ կերպ.

Ֆիլմերն ամորտիզացվում են 3-ից 10 տարվա ընթացքում՝ կախված դրանց յուրահատկություններից:

Երգերի նկատմամբ բացառիկ իրավունքներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:

Ծրագրերի և ֆիլմերի գծով ստացված լիցենզիաներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:

Հայ դասականների ստեղծագործությունների էկրանավորումները, Երևան ստուդիայի նյութերը (միակը Հանրապետությունում) և պատմական ֆիլմերը ամորտիզացվում են 30 տարվա ընթացքում:

Սպորտային և այլ միջազգային միջոցառումների հեռարձակման գծով ստացված արտասահմանյան լիցենզիաներն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:

Համակարգչային ծրագրերն ամորտիզացվում են՝ ելնելով լիցենզիայի պայմանագրի պայմաններից ու սահմանված ժամկետներից:

Ապրանքային նշաններն ամորտիզացվում են 10 տարվա ընթացքում:

Խմբի գործունեության առանձնահատկություններից ելնելով վերը նշված ամորտիզացիայի ժամկետները սահմանվում են այդ նպատակով ստեղծված Խմբի մասնագիտական հանձնաժողովի որոշումներով:

Ընթացիկ հաղորդումներ

Հաշվի առնելով, որ Խմբի գործունեությունը հաղորդումների պատրաստումն ու եթեր հեռարձակումն է, հաղորդումների պատրաստման հետ կապված բոլոր ծախսերը ծախսագրվում են՝ դրանց կատարման ժամանակաշրջանում:

4.7 Հիմնական միջոցներ

Հողերը և շենքերը, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատված հիմնական միջոցի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճն ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20-25 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5-10 տարի
Տնտեսական գույք և այլ	- 1-5 տարի
Արտադրական գույք, գործիքներ	- 1-5 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	- 1-5 տարի
Արտադրական գույք մինչև 50,000 դրամ արժողությամբ	- 1 տարի
Այլ հիմնական միջոցներ (այդ թվում տնտեսական գույք և դեկորներ)	- 1-8 տարի

4.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ հումքը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բանկային ավանդների արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում : Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 15-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և բանկային ավանդները:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ինչպես նաև ստացված վարկերը, որոնք ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են

ամորտիզացված արժեքով: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 15-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Տոկոսավճարները ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.9 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

4.10 Պետական շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Խմբի կանոնադրական նպատակների համար ստացված շնորհը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն տարում, երբ դրանք ստացվել են:

4.11 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

4.12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.13 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժինների վճարումներ

Մայր ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Վերագնահատման պահուստը ներառում է հողի և շենքերի վերագնահատումից աճը:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

4.14 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ հսումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ հսումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.15 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ հսմի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Հսումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

5 Հիմնական գործունեությունից հասույթ

2024թ.-ի հասույթն առաջացել է 2024թ. հունվարի 19-ին (2023թ.՝ 2022թ. դեկտեմբերի 29-ին) Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ ՊՀ-ի հետ մայր Ընկերության կողմից կնքված պայմանագրի իրականացումից, որը վերաբերում է պետության կարիքների համար հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման հետ:

6 Գովազդից և հովանավորչությունից հասույթ

	2024թ.	2023թ.
Հասույթ գովազդից	711,793	774,886
Հասույթ հովանավորչությունից	46,116	5,317
	757,909	780,203

Հասույթ գովազդից

Այս հասույթը գոյանում է սոցիալական և առևտրային բնույթի գովազդների տեղադրումից, որի համար հսումբը պայմանագրեր է կնքում՝ ինչպես առևտրային, այնպես էլ հասարակական կազմակերպությունների հետ:

Հասույթ հովանավորչությունից

Այս հասույթը գոյանում է հովանավորների մասին հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ տեղեկությունների տեղադրումից:

7 Դրամաշնորհներից եկամուտ

	2024թ.	2023թ.
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	394,886	498,414
Անհատույց ստացված հողամասի գծով շնորհներից եկամուտ	5,684	5,684
	400,570	504,098

8 Այլ եկամուտ

	2024թ.	2023թ.
Եկամուտներ ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից	284,453	246,770
Ֆիլմերի ցուցադրումից և այլ առևտրային եկամուտներ	97,610	183,567
Եկամուտներ հեռարձակումից և վերահեռարձակումից	29,503	43,820
Այլ եկամուտ	41,698	17,663
	453,264	491,820

Եկամուտներ ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից

Ֆիլմերի և հաղորդումների պատրաստումից եկամուտները գոյանում է երրորդ կողմերի հետ կնքված պայմանագրերի համաձայն ֆիլմերի նկարահանումներից, կնքված պայմանագրերի շրջանակներում տարաբնույթ ծրագրերի պատրաստումից, ինչպես նաև ընկերությունների գործունեության լուսաբանումից:

9 Ֆիլմերի և հաղորդումների գծով ծախսեր

	2024թ.	2023թ.
Ձեռքբերված և պատրաստված ֆիլմերի և հաղորդումների արժեք	1,525,338	1,293,710
Ֆիլմերի և հաղորդումների իրավունքի ամորտիզացիա	377,549	279,028
Այլ	160,387	166,908
	2,063,274	1,739,646

10 Հեռարձակման ծախսեր

	2024թ.	2023թ.
Արբանյակային հեռարձակում	250,041	130,427
Տեղական հեռարձակում	100,250	75,000
Ինտերնետային հեռարձակում	48,453	26,564
	398,744	231,991

11 Այլ ծախսեր

	2024թ.	2023թ.
Գործակալական վճարներ	70,729	69,440
Գովազդային գործունեության հետ կապված ծախսեր	72,169	61,070
Տրանսպորտային ծախսեր	50,426	44,677
Կոմունալ ծառայություններ	95,489	91,376
Գործուղման ծախսեր	47,811	48,823
Ներկայացուցչական ծախսեր	14,465	12,363
Նորությունների և տեղեկատվության ձեռքբերում	21,329	20,436
Շենքերի ընթացիկ պահպանման ծախսեր	22,431	36,965
Հեռահաղորդակցության ծառայություններ	22,384	19,732
Արտադրական նյութեր և պահեստամասեր	37,035	63,694
Չփոխհատուցվող հարկեր	12,431	8,838
Գրասենյակային ծախսեր	5,585	4,942
Առաջին Ալիք Մեդիա Ակադեմիա հիմնադրամի ծախսեր	16,528	-
Առողջության ապահովագրության ծախսեր	45,207	-
Այլ	145,549	102,593
	679,568	584,949

12 Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	34,197	158,212
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 18)	(33,359)	(74,510)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	838	83,702

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը (համաձայն ֆՀՄՍ-ների)	(221,550)		568,478	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	(39,879)	18.00	102,326	18.00
Չնվազեցվող ծախսեր, զուտ	40,717	(18.38)	(18,624)	(3.28)
Շահութահարկի գծով ծախս	838	(0.38)	83,702	14.72

13 Հիմնական միջոցներ

	Հող, շենքեր և շինություններ	Արտադրական, տնտեսական գույք տրանսպորտային միջոցներ	Անավարտ շինարա- րություն	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	9,143,819	10,699,026	3,207	19,846,052
Ավելացում	-	695,492	201,019	896,511
Օտարում	-	(373)	(765)	(1,138)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,143,819	11,394,145	203,461	20,741,425
Ավելացում	3,816	307,792	601,645	913,253
Օտարում	-	(60,748)	-	(60,748)
Ներքին շարժ	361,103	478	(361,581)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,508,738	11,641,667	443,525	21,593,930
Կուտակված մաշվածություն և արժեզրկում				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	261,276	8,367,597	-	8,628,873
Տարվա հաշվարկ	151,734	898,854	-	1,050,588
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(373)	-	(373)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	413,010	9,266,078	-	9,679,088
Տարվա հաշվարկ	155,331	897,647	-	1,052,978
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(59,068)	-	(59,068)
Արժեզրկումից կորուստ	-	6,275	-	6,275
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	568,341	10,110,932	-	10,679,273
Հաշվեկշռային արժեք				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,730,809	2,128,067	203,461	11,062,337
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,940,397	1,530,735	443,525	10,914,657

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

Խմբի հոդերը և շենքերը վերջին անգամ վերազնահատվել են անկախ գնահատողի կողմից 2023թ. հունվարի 1-ի դրությամբ: Գնահատումը կատարվել է՝ հիմնվելով շուկայում վերջերս իրականացված գործարքների վրա՝ «պարզած ձեռքի հեռավորության» պայմանով: Վերազնահատումից առաջացած աճը, հանած համապատասխան հետաձգված հարկերը, կրեդիտագրվել է վերազնահատման պահուստին՝ սեփական կապիտալում:

Եթե հոդերը և շենքերը ներկայացված լինեին սկզբնական արժեքով, ապա հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքները համապատասխանաբար կկազմեին 1,101,056 և 1,503,551 հազար << դրամ :

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,506,790 հազար << դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,761,566 հազար << դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

14 Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Ֆիլմեր, լիցենզիաներ, սցենարներ, ապրանքային նշաններ և այլ ոչ նյութական ակտիվներ	Անավարտ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	82,138	979,953	38,852	1,100,943
Ավելացում	21,903	281,485	6,679	310,067
Օտարում	-	(157,783)	-	(157,783)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	104,041	1,103,655	45,531	1,253,227
Ավելացում	25,640	313,095	1,225	339,960
Օտարում	(50,223)	(245,205)	(80)	(295,508)
Ներքին շարժ	8,030	29,558	(37,588)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	87,488	1,201,103	9,088	1,297,679
Կուտակված ամորտիզացիա				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	62,614	474,928	-	537,542
Տարվա հաշվարկ	29,123	273,692	-	302,815
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(157,783)	-	(157,783)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	91,737	590,837	-	682,574
Տարվա հաշվարկ	27,981	375,405	-	403,386
Օտարման հետևանքով դուրսգրում	(50,223)	(245,205)	-	(295,428)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	69,495	721,037	-	790,532
Հաշվեկշռային արժեք				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,304	512,818	45,531	570,653
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,993	480,066	9,088	507,147

15 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

15.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.8-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	496,121	391,457
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	259,366	394,092
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	755,487	785,549
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	755,487	785,549

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	457,006	275,406
Փոխհատուցումներ աշխատակիցներին	263,497	251,129
Վարկեր	150,356	150,316
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	870,859	676,851
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	870,859	676,851

15.2 Վարկեր

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Բանկային վարկեր	62,856	316	87,500	150,000
Ընդամենը վարկեր	62,856	316	87,500	150,000

Բանկային վարկն ունի 2 տարի մարման ժամկետ և տարեկան 11% միջին տոկոսադրույք: Վարկն ապահովված է 6.5 միլիարդ դրամ ֆինանսական հոսքերով:

16 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	496,121	391,457
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	496,121	391,457
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Պետական բուջեի գծով և այլ կանխավճարներ	70,783	104,298
Հետաձգված հարկեր ԱԱՀ-ի գծով	510	-
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	71,293	104,298
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	567,414	495,755

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խմբի՝ համեմատական ժամանակաշրջանի առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Տե՛ս ծանոթագրություն 24.1՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

17 Կապիտալ և պահուստներ

17.1 Կանոնադրական կապիտալ

Խմբի կանոնադրական կապիտալը կազմում է 2,391,107 հազար ՀՀ դրամ (2023՝ 2,391,107 հազար ՀՀ դրամ): Այն բաժանված է 15,940,712 հատ հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 150 դրամ անվանական արժեքով (2023՝ 15,940,712 հատ հասարակ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 150 դրամ անվանական արժեքով):

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Խմբի միակ բաժնետերեր: Խմբի բաժնետոմսերի կառավարման լիազորությունը տրված է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկին

17.2 Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվում են հատկացումներ, ինչը կարգավորվում է Մայր Ընկերության կանոնադրությամբ: Համաձայն Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկի 2024թ. հունիսի 27-ի N49-Լ որոշման՝ Խմբի պահուստային կապիտալը համարվել է 6,000 հազար ՀՀ դրամի չափով (2023 թ.՝ 72,720 հազար ՀՀ դրամ):

17.3 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է հողերի և շենքերի վերագնահատման արդյունքում: Վերագնահատված հողերի և շենքերի օտարման կամ իրացման ժամանակ դրանց գծով վերագնահատման պահուստը հաշվեզրկում է ուղղակիորեն կուտակված շահույթին:

18 Հետաձգված եկամուտ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	1,341,540	1,780,748
Ավելացում	528,256	64,891
Եկամտի ճանաչում	(400,570)	(504,099)
Տարեվերջի մնացորդ	1,469,226	1,341,540

19 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	(1,088,368)	(1,162,878)
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 12)	33,359	74,510
Տարեվերջի մնացորդ	(1,055,009)	(1,088,368)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	45,103	1,991	47,094
Շնորհներ	10,608	(2,569)	8,039
	55,711	(578)	55,133
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	1,143,466	(33,845)	1,109,621
Ոչ նյութական ակտիվներ	613	(92)	521
	1,144,079	(33,937)	1,110,142
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(1,088,368)	33,359	(1,055,009)

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հեղաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	42,568	2,535	45,103
Շնորհներ	-	10,608	10,068
	42,568	13,143	55,711
Հեղաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	1,205,879	(62,413)	1,143,466
Ոչ նյութական ակտիվներ	(433)	1,046	613
	1,205,446	(61,367)	1,144,079
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(1,162,878)	74,510	(1,088,368)

20 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	457,006	275,406
Հաճախորդներից կանխավճարներ	18,323	24,627
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	123,964	131,872
Փոխհատուցումներ աշխատակիցներին	263,497	251,129
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	862,790	683,034

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Խմբի արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 24.1-ում

21 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ասոցիացված կազմակերպություններում ներդրումը ներառում է Մայր Ընկերության ներդրումը «Մեդիա Հաուս Արմենիա» ՍՊԸ սեփական կապիտալի 50 տոկոսում: Ներդրման գումարը չի ներկայացվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ Խմբի ղեկավարության գնահատականով հաշվետու ամսաթվի դրությամբ այն մոտ էր զրոյին:

Անվանում	Հիմնական գործունեություն	Գրանցման երկիր	Բաժնեմասի չափ (%)	
			2024թ.	2023թ.
«Մեդիա Հաուս Արմենիա» ՍՊԸ	Գովազդ	Հայաստան	50	50

Խմբի ասոցիացված կազմակերպության մասին ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ընդամենն ակտիվներ	690,814	424,242
Ընդամենը պարտավորություններ	(764,406)	(482,020)
Զուտ պարտավորություններ	(73,592)	(57,778)
	2024թ.	2023թ.
Ընդամենը հասույթ	829,682	1,015,490
Ընդամենը տարվա շահույթ(վնաս)	(15,814)	6,962

22 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են ստորև նշված Ընկերությունները, որոնք Խմբի հետ միասին գտնվում են Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկի կառավարման ներքո.

- Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ,
- Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ:

Խումբն իր մատուցված ծառայությունների դիմաց գումարները ստանում է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկից:

Կապակցված կողմեր են նաև Խմբի ասոցիացված կազմակերպությունը՝ «Մեդիա Հաուս Արմենիա» ՍՊԸ, Խմբի կողմից հիմնադրված «Առաջին ալիքի Մեդիա ակադեմիա» հիմնադրամը և «Հեռուստաընտանիք» բարեգործական հիմնադրամը:

22.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

- Խումբն իր մատուցված ծառայությունների դիմաց գումարները ստանում է Հայաստանի Հանրապետության Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ Պետական Հիմնարկից, որը 2024թ.-ի համար կազմել 5,330,785 հազար << դրամ առանց ԱԱՀ (2023թ.' 5,280,683 հազար << դրամ առանց ԱԱՀ):
- Խումբն իր ասոցիացված կազմակերպության նկատմամբ ծախսը կազմել է 388,539 հազար << դրամ (2023թ.' 401,836 հազար << դրամ):
- Խմբի կողմից Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ-ի նկատմամբ ծախսը կազմել է 75 հազար << դրամ առանց ԱԱՀ (2023թ.' 3,200 հազար << դրամ առանց ԱԱՀ):
- Խմբի կողմից «Առաջին ալիքի Մեդիա ակադեմիա» հիմնադրամին տրվել է 16,528 հազար << դրամ (2023թ.' 0) նվիրաբերություն:

22.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	221,434	215,195
Ընդամենը	221,434	215,195

23 Պայմանականություններ

23.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

24.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլլար	Եվրո	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	33,605	6,993	3,571
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	3,419	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	37,024	6,993	3,571
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	57,800	41,558	2,249
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	57,800	41,558	2,249
Զուտ արդյունք	(20,776)	(34,566)	1,322

Հոդված

31 դեկտեմբերի 2023թ.	ԱՄՆ դոլլար	Եվրո	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	46,106	26,559	5,908
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	4,225	4,811	8,728
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	50,331	31,370	14,636
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21,511	7,372	11,030
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	21,511	7,372	11,030
Զուտ արդյունք	28,820	23,998	3,606

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը : 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	(2,078)	2,882	(3,457)	2,400
	(2,078)	2,882	(3,457)	2,400

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել խմբի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

24.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Խմբի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և բանկերում մնացորդները: Խումբը կարգավորում է այս ռիսկը դրամական միջոցները հեղինակավոր բանկերում պահելու միջոցով: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հավաքագրման հետ կապված ռիսկերը շատ փոքր են: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

	2024թ.	2023թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքեր	259,366	394,092
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	496,121	391,457
Ընդամենը	755,487	785,549

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բանկային հաշիվների մնացորդները կազմում էին համապատասխանաբար 259,266 հազար << դրամ և 394,092 հազար << դրամ, ինչը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են ընդհանուր ակտիվներով տասը խոշոր հայկական բանկերից հանդիսացող բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ այդ բանկերը չեն կատարի իրենց պայմանագրային պարտականությունները: Խմբի գնահատմամբ բանկային հաշիվների մնացորդների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել, ինչը հիմնականում պայմանավորված է վերջիններիս կարճաժամկետ բնույթով:

24.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	457,006	-	457,006
6 ամսից մինչև 1 տարի	263,497	62,856	326,353
1-5 տարի	-	87,500	87,500
	720,503	150,356	870,859

2023թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	275,406	316	275,722
6 ամսից մինչև 1 տարի	251,129	-	251,129
1-5 տարի	-	150,000	150,00
	526,535	150,316	676,851

Խումբն իրացվելիության դիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը և ստացվելիք դրամաշնորհները: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը բավարար են անհրաժեշտ դրամական արտահոսքերը կատարելու համար: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1 ամսվա ընթացքում:

25 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

25.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Մայր Ընկերությունը հողը և շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ

մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր: Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում: Հետագա տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Հող և շենքեր

Իրական արժեքը որոշվել է օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից նմանատիպ պայմաններով անշարժ գույքի համար հայտարարված վաճառքի գների հիման վրա, կիրառելով 0.6-ից 1.2 տիրույթում ընկած գործակիցներ՝ օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից տարբերությունների (առկայության դեպքում) հետ կապված ելակետային գները ճշգրտելու համար: Հողերի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, քանի որ կիրառվող գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների գծով կատարվել են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ (գործակիցներ):

26 Կապիտալի ռիսկի քաղաքականություններ և ընթացակարգեր

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ):

Խմբի՝ որպես կապիտալ կառավարվող գումարները ստուգվող հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Զուտ պարտք		
Սեփական կապիտալ	8,792,719	9,285,965
Հանած՝ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(259,366)	(394,092)
Կապիտալ	8,533,353	8,891,873
Ծշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	8,792,719	9,285,965
Վարկեր	150,356	150,316
Ընդհանուր ֆինանսավորում	8,943,075	9,436,281
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	0.95	0.94